

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2024 թ. հոկտեմբերի 25-ին կայացած թիվ 6 նիստի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2024 թ. հոկտեմբերի 25-ին կայացած թիվ 6 նիստը նախագահում էր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը:

Գիտական խորհրդի 32 անդամներից գիտական խորհրդի նիստին մասնակցել են 23-ը:

Օրակարգում՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենսաբանության ֆակուլտետի «Կենսաբանություն» ԳՀ ինստիտուտի գիտական կազմի թափուր պաշտոնների համալրման մրցութային ընտրության հարցը:
2. ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում իրականացվող «Գիտական խմբերի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցություն-2023» գիտական թեմաների ընթացիկ հաշվետվությունների հարցը:
3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում կրթական ծրագրերի բարելավման դրամաշնորհի տրամադրման մրցութին ներկայացված հայտի երաշխավորության հարցը:
4. Կենսաբանության ֆակուլտետի 2025-2026 ուս. տարվա առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելության անվճար տեղերը ձևավորելու համար հավանական ղեկավարների կողմից հայտ ներկայացնելու հարցը:
5. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի հայցորդների թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:
6. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենսաբանության ֆակուլտետի «Կենսաբանություն» ԳՀ ինստիտուտի գիտական կազմի թափուր պաշտոնների համալրման մրցութային ընտրության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահ՝ կ.գ.թ. Լ.Ս. Գաբրիելյանը: Կ.Ա. Ղազարյանը նշեց, որ «Կենսաբանություն» ԳՀ ինստիտուտի գիտական կազմի թափուր պաշտոնների համալրման մրցութին ներկայացվել է 36 անձնական գործ: Տեղեկություններ հավակնորդների մասնագիտական բնութագրերի և գիտական որակավորումների մասին ներկայացրեց Լ.Ս. Գաբրիելյանը (մրցութային հանձնաժողովի կարծիքները կցված են): Ըստ գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողովի կարծիքի՝ մրցութին ներկայացված հավակնորդների գիտական գործունեությունը, գիտական աստիճանը և աշխատանքային ստաժը համապատասխանում են ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 2298-Ն որոշմամբ սահմանված տվյալ պաշտոնին ներկայացվող գնահատման չափանիշների քանակական պահանջներին:

Ելույթներից հետո ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ Աննա Ֆելիքսի Կարապետյան (ԵՊՀ մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, դոցենտ, կ.գ.թ.); անդամներ՝ Նիկոլայ Վլադիմիրի Ավթանդիլյան (ԵՊՀ «Կենսաբանություն» ԳՀԻ Հիմնարար և ախտաբանական կենսաքիմիայի լաբորատորիայի վարիչ, կ.գ.թ.); Արմինե Համլետի Վարդանյան (ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատի «Կենսաբանություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի) և անցկացվեց փակ գաղտնի քվեարկություն:

Փակ գաղտնի քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա.Ֆ. Կարապետյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները:

Ստորև ներկայացվում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենսաբանության ֆակուլտետի «Կենսաբանություն» ԳՀ ինստիտուտի գիտական կազմի թափուր պաշտոնների համալրման քվեարկության արդյունքները:

**«Կենսաբանություն» ԳՀԻ-ի գիտական ստորաբաժանման ղեկավարի թափուր
պաշտոնի հավակնորդներ**

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դրույքաչափ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Վարդանյան Պողոս Հովհաննեսի	1 դրույք	20	2	1

2.	Ղազարյան Կարեն Արամայիսի	0,5 դրույք	23		
3.	Նանագյուլյան Սիրանուշ Գերասիմի	0,5 դրույք	23		

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի գիտական խմբի ղեկավարի թափուր պաշտոնի
հավակնորդներ

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դրույքաչափ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Անտոնյան Արա Պետիկի	1 դրույք	22	1	
2.	Ասատրյան Անուշ Լևոնի	1 դրույք	21	1	1
3.	Հարությունյան Տիգրան Աշոտի	1 դրույք	23		
4.	Զավրուշյան Հայարփի Գևորգի	1 դրույք	23		
5.	Եսայան Ալեքսանդր Հրանտի	0,75 դրույք	22	1	
6.	Մարգարյան Արմինե Արմենի	0,5 դրույք	23		
7.	Փոլադյան Աննա Արշակի	0,5 դրույք	23		

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի առաջատար գիտաշխատողի թափուր պաշտոնի
հավակնորդներ

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դրույքաչափ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Փարսադանյան Մարինե Աշոտի	1 դրույք	23		

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի ավագ գիտաշխատողի թափուր պաշտոնի
հավակնորդներ

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դրույքաչափ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Վասիլյան Անահիտ Վելլերի	1 դրույք	22		1
2.	Շահինյան Մարիամ Աշոտի	0,75 դրույք	23		
3.	Անանյան Գայանե Վոլոդի	0,5 դրույք	23		
4.	Սևոյան Գարեգին Գևորգի	0,5 դրույք	22	1	
5.	Գաբրիելյան Լիլիթ Սերգեյի	0,25 դրույք	23		
6.	Աղայան Մարգիս Աղասու	0,25 դրույք	23		

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի գիտաշխատողի թափուր պաշտոնի հավակնորդներ

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դրույքաչափ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Աղաջանյան Անուշ Արամայիսի	1 դրույք	22	1	
2.	Եսոյան Սյուզաննա Սայաթի	1 դրույք	23		
3.	Գևորգյան Հեղինե Խաժակի	1 դրույք	23		
4.	Ղարիբյան Նարինե Գրիգորի	1 դրույք	23		
5.	Գինուվյան Միքայել Մարտիկի	1 դրույք	23		
6.	Միքայելյան Մարիետա Սամվելի	1 դրույք	23		
7.	Վանյան Լիանա Մանվելի	1 դրույք	23		
8.	Մինասբեկյան Լիյա Ալեքսանդրի	1 դրույք	21	1	1
9.	Կարապետյան Հասմիկ Մախնելեստի	0,75 դրույք	23		
10.	Պողոսյան Աստղիկ Վիկտորի	0,75 դրույք	23		
11.	Գրիգորյան Կարինե Մարտինի	0,5 դրույք	21	1	1
12.	Հակոբյան Նունե Ռոմենի	0,5 դրույք	23		
13.	Հովհաննիսյան Ազապի Գևորգի	0,5 դրույք	23		
14.	Պետրոսյան Ռուզաննա Կիմի	0,5 դրույք	23		
15.	Սարգսյան Անժելա Աշոտի	0,5 դրույք	23		
16.	Շուշանյան Ռուզաննա Արսենի	0,5 դրույք	23		
17.	Յավրոյան Ժենյա Վաղինակի	0,5 դրույք	23		
18.	Արզումանյան Մերի Վիկտորի	0,5 դրույք	23		
19.	Համբարյան Լուսինե Ռաֆիկի	0,25 դրույք	23		

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել փակ գաղտնի քվեարկության արդյունքները և «Կենսաբանություն» ԳՀ ինստիտուտի գիտական կազմի թափուր պաշտոնները համալրելու նպատակով ներկայացվող հավակնորդներին համարել ընտրված համապատասխան պաշտոններում:

2. ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ «Գիտական խմբերի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցություն-2023» մրցույթի ընթացիկ հաշվետվությունների հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ «Կենսաբանություն» ԳՀԻ տնօրեն, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Կարեն Արմենի Թոչունյանը (Թեմա՝ «Գլոբալ կարգավորիչների և տրանսկրիպցիոն ակտիվատորների դերը միկրոօրգանիզմների նյութափոխանակության և կենսաէներգետիկական պարամետրերի կարգավորման գործընթացում խմորման և շնչառության պայմաններում» ծածկագիր 23LCG-1F003) և «Կենսաբանություն» ԳՀԻ Հիմնարար և ախտաբանական կենսաքիմիայի լաբորատորիայի վարիչ, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ, կ.գ.թ. Նիկոլայ Վլադիմիրի Ավթանդիլյանը (Թեմա՝ «Բջջային ազդանշանային համակարգերի բազմաթիրախային կարգավորումը կրծքագեղձի քաղցկեղի և շաքարախտի փորձարարական մոդելներում. բացահայտել երկու հիվանդությունների բուժման մեկ ուղի» ծածկագիր 23LCG-1F010):

Կարեն Թոչունյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են պայմանագրով ամրագրված օրացուցային պլանին և առաջադրանքին համապատասխան հետազոտությունները: Մասնավորապես ուսումնասիրվել է *E. coli* վայրի տիպում և CRP, FNR և ArcA գլոբալ կարգավորիչ սպիտակուցների միակի մուտանտներում աճման որոշ պարամետրերի (օքսիդավերականգնողական պոտենցիալ (ՕՎՊ), pH, օպտիկական խտություն (ՕԽ) և միջավայրի օսմոլալություն) ջրածնի արտադրության որոշում՝ գլյուկոզի բացակայությամբ և $0.5 \text{ գ } \text{լ}^{-1}$, $2 \text{ գ } \text{լ}^{-1}$, $8 \text{ գ } \text{լ}^{-1}$ և $20 \text{ գ } \text{լ}^{-1}$ կոնցենտրացիաներով գլյուկոզ պարունակող միջավայրերում pH 7.5 և pH 5.5 արժեքներում, ինչպես նաև H^+ - K^+ -ական հոսքի և ԱԵՖազային ակտիվության որոշում գլյուկոզի բացակայությամբ, $2 \text{ գ } \text{լ}^{-1}$, $8 \text{ գ } \text{լ}^{-1}$ կոնցենտրացիաներով գլյուկոզ պարունակող pH 7.5 միջավայրերում: Հետազոտվել են նաև *S. cerevisiae* ATCC 9804 և ATCC 13007 խմորասնկային շտամերի աճման բնութագրերը (μ , լազ փուլի տևողություն, կենսազանգվածի առաջացման էլքի, գաղութառաջացման միավոր (ԳԱՄ)) միջավայրի տարբեր pH-ի (3.0; 4.5) պայմաններում՝ ֆիզիոլոգիական և սթրեսային պայմաններում: Աճման ընթացքում թթվածնի ազդեցության ուսումնասիրման համար հետազոտություններն իրականացվել են աերոբ և թթվածնի սահմանափակման պայմաններում: μ -ն ուսումնասիրվել է ածխածնի տարբեր աղբյուրներ (գլյուկոզ ($5 \text{ գ } \text{լ}^{-1}$; $20 \text{ գ } \text{լ}^{-1}$), ֆրուկտոզ ($5 \text{ գ } \text{լ}^{-1}$; $20 \text{ գ } \text{լ}^{-1}$), գլիցերոլ ($30 \text{ գ } \text{լ}^{-1}$) պարունակող միջավայրերում: Հետազոտությունների մեկ այլ շարքով ուսումնասիրվել է պրոտոնային FoFi -ԱԵՖազի

ներդրումը խմորման ելանյութերի յուրացման և վերջնանյութերի առաջացման, ինչպես նաև Δp-ի ձևավորման գործընթացում գլյուկոզի, գլիցերոլի և մրջնաթթվի խառնուրդի խմորման ընթացքում հիմնային pH-ում՝ կիրառելով *E. coli* DK8 մուտանտը (պրոտոնային FoF₁-ԱԵՖագի բացակայությամբ): Արդյունքում տպագրվել է 4 հոդված (Q1 Scopus/WoS), 6 թեզիս և ուղարկվել է 1 գիտական դրամաշնորհի հայտ:

Նիկոլայ Ավթանդիլյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են պայմանագրով ամրագրված օրացուցային պլանին և առաջադրանքին համապատասխան հետազոտություններ: Իրականացվել է դեղաբույսերի քանակական և որակական ֆիտոքիմիական բնութագրում՝ օգտագործելով առաջադեմ քրոմատոգրաֆիկ համակարգեր Լեհաստանի Գդանսկի տեխնոլոգիական համալսարանի հետ համատեղ, ինչպես նաև մի շարք դեղաբույսերում պարունակվող միացությունների նույնականացում: Կատարվել է բույսերում նույնականացված ֆիտոմիացությունների փոխազդեցության *in silico* պարզաբանում PI3K–AKT և MAPK ուղիներում ներգրավված բաղադրիչների հետ: Բացահայտվել է ամենամեծ խնամակցությամբ օժտված միացությունները և ձեռք բերվել (Էմոդին, փսեուդոնիպերիցին, Էնդոկրոկին, եոկումարոիլ սպերմիդին): Գիտական խմբի անդամները մասնակցել են EACR և FEBS քաղցկեղի հետազոտման և կենսաքիմիական մասնագիտական ասոցիացիաների 2024թ. կոնգրեսներին (ներկայացվել է 7 թեզիս): Աշխատանքներ են տարվում ոլորտի առաջադեմ գիտական խմբերի հետ համագործակցություն ձեռք բերելու ուղղությամբ: Կատարվել է 1 դրամաշնորհային հայտի ներբեռնում (submitted) ERC-2025-STG ծրագրին (HORIZON-ERC starting grant, NAT-ABCBlock)՝ 1.5մլն Euro ֆինանսական ֆոնդով: Հաշվետու տարվա ընթացքում տվյալ նախագծի շրջանակներում տպագրվել է 3 գիտական հոդված՝ 1 հատ Q1, 2 հատ Q2 Scopus/WOS ամսագրերում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել վերոհիշյալ թեմաների հետագա ֆինանսավորումը:

3. ԼՍԵՅԻՆ՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում կրթական ծրագրերի բարելավման դրամաշնորհի տրամադրման մրցույթին ներկայացված հայտերի երաշխավորության հարցը:

Նշված դրամաշնորհին հայտ են ներկայացրել «Կենսաբանություն» կրթական ծրագրի ղեկավար, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Աննա Ֆելիքսի Կարապետյանը և «Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա»

կրթական ծրագրի ղեկավար, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., դոցենտ Աննա Արշակի Փոլադյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կ.գ.թ., դոցենտ Աննա Ֆելիքսի Կարապետյանը և կ.գ.դ., դոցենտ Աննա Արշակի Փոլադյանը:

«Կենսաբանություն» կրթական ծրագրի ղեկավար, կ.գ.թ., դոցենտ Աննա Ֆելիքսի Կարապետյանը նշեց, որ կենսաբանության և հարակից ոլորտներում նորագույն նվաճումները արձանագրվում են մեծ արագությամբ: Գիտական նորանոր փաստերն ու պատկերացումներն այդ բնագավառներում չափազանց արագ են կուտակվում: Գենետիկայի, ֆիզիոլոգիայի, կենսատեխնոլոգիայի, կենսաինֆորմատիկայի, էկոլոգիայի և բժշկագիտության ոլորտներում նոր բացահայտումները պահանջում են կենսաբանական կրթական տարբեր ծրագրերի ուսանողներից ոչ միայն հիմնարար գիտելիքների ձեռք բերում, այլ նաև գիտության նորարարական մոտեցումներին և ժամանակակից մեթոդներին տիրապետում: Ուստի բակալավրիատի «Կենսաբանություն» կրթական ծրագրի արդիականացումը կարևոր քայլ է՝ ուսանողներին մասնագիտական գործունեության և հետագա գիտական հետազոտություններին պատրաստելու համար: Ծրագրի բարելավման հիմնական նպատակը արդի, միջառարկայական և հավասարակշիռ ուսումնական համակարգի ստեղծումն է, որն ուսանողներին ապահովում է հիմնարար գիտելիքներով և հմտություններով, որոնք պահանջարկ կունենան ինչպես աշխատաշուկայում, այնպես էլ կկարևորվեն գիտական միջավայրում:

«Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա» կրթական ծրագրի ղեկավար, կ.գ.դ., դոցենտ Ա.Ա. Փոլադյանը նշեց, որ «Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա» բակալավրի կրթական ծրագրի մեկնարկի համար խթան հանդիսացավ ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման հրամայականը: Ծրագիրը 1995թ-ից գործող «Կենսաքիմիա» կրթական ծրագրի լրամշակված տարբերակն է, որին ավելացվել է «Կենսատեխնոլոգիա» պրոֆիլը: Դրան նպաստեց նաև 2016 թ-ին «Կենսաքիմիա» և «Մանրէաբանության, բույսերի և մանրէների կենսատեխնոլոգիա» ամբիոնների միավորումը, ինչն ապահովեց անհրաժեշտ գիտաուսումնական ռեսուրսների և դասախոսական կազմի առկայությունը ծրագիրն իրականացնելու համար: Նորաստեղծ Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնը դիմել է Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

(ՀՀ ԿԳՄՄ)՝ նախկին «Կենսաքիմիա» բակալավրի կրթական ծրագիրը վերանվանելու «Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա»՝ ծրագրային համապատասխան փոփոխություններով: Վերանվանված ծրագիրը անցել է փորձաքննություն և 2021 թ-ի մայիսի 10-ին ստացել դրական եզրակացություն: Ա. Փոլադյանը նշեց նաև, որ 2023թ-ին «Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա» կրթական ծրագիրը անցել է միջազգային ծրագրային հավատարմագրում՝ Գերմանական «ASIIN» գործակալության կողմից: Տրվել է փորձագիտական խմբի դրական եզրակացություն և հավաստագիր՝ մեկ տարի ժամկետով: Խմբի կողմից հնչեցվել են որոշ առաջարկներ, որոնց դիտարկման դեպքում հավատարմագրումը կերկարացվի ևս 5 տարով: 2023 թ-ին ԵՊՀ ՊՈԱԿ կողմից առաջին անգամ անցկացվեց կրթական ծրագրի մշտադիտարկում՝ մոնիթորինգ, որի արդյունքը դրական է եղել, սակայն զեկույցում բարձրացվել են կարևոր խնդիրներ՝ ուսանողների ծրագրի վերջնարդյունքների տիրապետման, որոշ առարկաներում կրկնությունների և տարբեր առարկաների բովանդակության վերաբերյալ: Հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջարկը, կենսաքիմիայի ու կենսատեխնոլոգիայի ոլորտներում գիտության առաջընթացը, ինչպես նաև բակալավրի կրթական ծրագրի մոնիթորինգի արդյունքները՝ վերանայման և բարելավման են ներկայացվում որոշ առարկաներ (թվով 11): Ա. Փոլադյանը փաստեց նաև այն, որ խմբի միջազգային մասնակից է հանդիսանում Ենայի Ֆրիդրիխ Շելլերի անվան համալսարանի (ԵՖՇՀ) պրոֆեսոր, Կենսաքիմիայի և կենսաֆիզիկայի ինստիտուտի տնօրեն, Կենսաքիմիայի ամբոնի վարիչ, «Կենսաքիմիա» բակալավրի կրթական ծրագրի ղեկավար՝ Թորսթեն Հեյնզելը, որի միջազգային վարկանիշային տվյալներն են. ըստ Scopus h-index 40; ըստ Google Scholar-ի՝ h-index 45:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել ներկայացվող 2 նախագծերը դրամաշնորհին մասնակցելու համար:

4. ԼՍԵՑԻՆ՝ Կենսաբանության ֆակուլտետի 2025-2026 ուս. տարվա առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելության անվճար տեղերը ձևավորելու համար հավանական ղեկավարների կողմից հայտերի ներկայացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ հավանական ղեկավարները՝ Կարեն Ղազարյանը, Կարեն Թոչունյանը, Սեդա Մարությանը, Լիլիթ Գաբրիելյանը, Աննա Փոլադյանը, Մուսաննա Բադայանը, Աստղիկ Ղազարյանը, Մարինե Առաքելյանը: Նրանք ներկայացրեցին ասպիրանտական հետազոտությունների համար նախատեսված թեմաների համառոտ բնութագրերը:

Կարեն Արամայիսի Ղազարյանի կողմից առաջարկվեց սասպիրանտական հետազոտությունների համար «Բնապահպանական նորարարական մոտեցումներ՝ աղային և ջրային սթրեսի հանդեպ բույսերի դիմացկունությունը բարձրացնելու համար. Կայուն զարգացման նպատակներին հասնելու ճանապարհին» թեման՝ նախատեսված 2 սասպիրանտների համար, Գ.00.05 «Բուսաբանություն. սնկաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ: Կ. Ղազարյանը նշեց, որ այս հետազոտությունները միտված են Արարատյան դաշտում բարելավելու գյուղատնտեսական աշխատանքների վարման մեթոդները՝ ներդնելով նանոմասնիկների (մասնավորապես կենսաածին նանոմասնիկների), նանոպարարտանյութերի և կենսաածուխի կիրառումը: Սասպիրանտական հետազոտությունների հիմնական նպատակն է հանդիսանալու բարձրացնել ցորենի և գարու դիմացկունությունն աղիության և ջրային սթրեսների նկատմամբ, ինչպես նաև խթանել գյուղատնտեսական թափոնների կառավարումը: Գլոբալ տաքացման սպառնալիքի և շրջակա միջավայրի սթրեսների ավելացման պատճառով այս նորարարական մոտեցումները հանդիսանում են խիստ անհրաժեշտություն կայուն գյուղատնտեսության համար: Գնահատելով մշակաբույսերի վրա կենսաածին նանոմասնիկների, նանոպարարտանյութերի և կենսաածուխի ագրոնոմիական, մորֆոլոգիական, ֆիզիոլոգիական, կենսաքիմիական և մոլեկուլային ազդեցությունները՝ ուսումնասիրությունները նպատակ ունեն բացահայտել «կանաչ» տեխնոլոգիաների ներուժը մշակաբույսերի արտադրության գործընթացում աղիության և երաշտի վնասակար ազդեցությունները մեղմելու համար: Բացի այդ, հետազոտությունների ընթացքում փորձ կարվի հիմնախնդրի վերաբերյալ ստեղծել ոչ միայն գիտական հիմք, այլ նաև ներգրավել տեղական համայնքներին, խթանել «կանաչ» գյուղատնտեսությանը միտված կրթությունը և ազդել կայուն գյուղատնտեսական պրակտիկաների ընդլայնմանը ուղղված քաղաքական առաջարկությունների վրա: Ի վերջո, այս հետազոտությունները կնպաստեն NanoGreen գյուղատնտեսության ձևավորմանը՝ խթանելով մշակաբույսերի դիմացկունությունը և ապահովելով պարենային անվտանգությունը՝ աճող բնապահպանական մարտահրավերների պայմաններում:

Կարեն Թոշունյանի կողմից առաջարկվեց 2 թեմա, Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ:

Ներկայացվեց «E. coli-ի մրջնաթթվային անցքուղիների դերը մրջնաթթվի նյութափոխանակության գործընթացում ածխածնի տարբեր աղբյուրների և դրանց խառնուրդների խմորման պայմաններում» թեման: Կ. Թոշունյանը նշեց, որ

էնտերոբակտերիաներում մրջնաթթուն անփոխարինելի մոլեկուլ է, որը արտադրվում է խառը թթվային խմորման ընթացքում, կազմելով յուրացվող ածխաջրի մինչև մեկ երրորդը: Ցույց է տրվել, որ FocA անցուղու կոնսերվատիվ հիստիդինի մնացորդը (H209) փոխարինելու դեպքում տեղափոխիչը վերածվում է միակողմանի արտահոսքի անցքուղու: Հետազոտության նպատակն է պարզաբանել ածխածնի տարբեր աղբյուրների (գլյուկոզ, արաբինոզ, քսիլոզ, գլիցերոլ և այլն) և դրանց խառնուրդների յուրացման ազդեցությունը մրջնաթթվի նյութափոխանակության, դրա տեղափոխության, ինչպես նաև բջջի ֆիզիոլոգիայի և կենսաէներգետիկայի վրա:

Հաջորդ թեման է՝ «Թույլ օրգանական թթուների ազդեցությունը որոշ *S. cerevisiae* խմորասնկերի կենսաքիմիական և կենսաէներգետիկական ցուցանիշների վրա կախված միջավայրի pH-ից և թթվածնի քանակությունից» թեման:

Կ. Թոչունյանը նշեց, որ արդյունաբերական գործընթացներում *Saccharomyces cerevisiae* խմորասնկերը պարբերաբար ենթարկվում են տարբեր թույլ օրգանական թթուների (ԹՕԹ) ազդեցությանը, որոնք էթանոլային խմորման հիմնական վերջնանյութերից են: Հետազոտության նպատակն է պարզաբանել *S. cerevisiae* ATCC 9804 և 13007 արտադրական շտամերում ԹՕԹ-ի ազդեցության մեխանիզմները կախված միջավայրի pH-ից, թթվածնի հասանելիությունից, ածխածնի աղբյուրի տեսակից և կոնցենտրացիայից: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվելու է ԹՕԹ-ի, մասնավորապես քացախաթթվի, մրջնաթթվի և մալոնաթթվի տարբեր կոնցենտրացիաների ազդեցությունը խմորասնկի աճման, միջավայրի ֆիզիակաքիմիական ցուցանիշների փոփոխության, պլազմային թաղանթով իոնային հոսքերի, ներբջջային pH-ի և թաղանթային պոտենցիալի վրա:

Սեդա Վիկտորի Մարությանի կողմից առաջարկվեց «ԱԵՖ-ազային ակտիվության փոփոխությունը որոշ խմորասնկերի բջիջներում տարբեր սթրեսային գործոնների ազդեցությամբ» թեման, Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ: Ս. Մարությանը նշեց, որ ներկայացվող թեման նվիրված է խմորասնկային բջիջներում էներգիայի ունիվերսալ աղբյուրի՝ ԱԵՖ-ի առաջացման ուսումնասիրմանը տարբեր սթրեսային գործոնների (իոնացնող և ոչ իոնացնող ճառագայթում, ազոտային քաղց, ջերմաշոկ) ազդեցությամբ: Նախատեսվում է ուսումնասիրել սթրեսային պայմաններում ԱԵՖ-ազային ակտիվության փոփոխությունը խմորասնկերի հոմոգենատներում և միտոքոնդրիումներում, պարզաբանել ԱԵՖ-ազային ակտիվության փոփոխության մոլեկուլային մեխանիզմը, ինչպես նաև՝ տեղի ունեցող գործընթացների վրա մեղվի մայրակաթի հնարավոր ազդեցությունը:

Լիլիթ Սերգեյի Գաբրիելյանի կողմից առաջարկվեց «Ցիանոբակտերիա *Arthrospira platensis*-ից նանոմասնիկների կենսասինթեզը և դրանց ֆիզիկաքիմիական և կենսաբանական հատկությունների ուսումնասիրությունը» թեման, Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ: Լ. Գաբրիելյանը նշեց, որ աշխատանքի նպատակն է ցիանոբակտերիա *Arthrospira (Spirulina) platensis*-ից արծաթի և ցինկի նանոմասնիկների կենսասինթեզը, դրանց ֆիզիկաքիմիական հատկությունների բնութագրումը և կենսաբանական ակտիվության որոշումը: Մշակվելու են նանոմասնիկների «կանաչ սինթեզի» նոր մոտեցումներ: Կենսածին նանոմասնիկների ֆիզիկաքիմիական վերլուծությունն իրականացվելու է ժամանակակից մեթոդների կիրառմամբ: Իրականացվելու է կենսածին նանոմասնիկների հակամանրէային ակտիվության գնահատում պայմանական ախտածին բակտերիաների և տարբեր սնկերի նկատմամբ: Հետազոտվելու են նաև նանոմասնիկների հեմոլիտիկ և հակաքաղցկեղային հատկությունները: Որոշվելու են նանոմասնիկների ազդեցության մեխանիզմները: Ստացված արդյունքների հիման վրա առաջարկվելու են տարբեր ոլորտներում կենսածին նանոմասնիկների կիրառման հեռանկարները:

Աննա Արշակի Փոլադյանի կողմից առաջարկվեց «Արտաքին միջավայրի սթրեսային պայմաններում հիդրոգենազ ֆերմենտների ակտիվության ուսումնասիրումը» թեման, Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ: Ա. Փոլադյանը նշեց, որ *Cupriavidus necator* H16-ը և *Cupriavidus metallidurans* CH34-ը ֆակուլտատիվ քեմոլիթոտոտրոֆ մանրէներ են: Դրանք լավագույն ուսումնասիրված մոդելային օրգանիզմներից են, որոնք աճում են լիթոպոտոտրոֆ՝ H_2 -ի, CO_2 -ի և O_2 -ի յուրացման պայմաններում և մակածում O_2 -կայուն [NiFe] Հիդրոգենազ ֆերմենտներ (Հիդ): Վերջիններս հանդիսանում են կենսաբանական վառելիքային սարքերում (ԿՎՍ) անոդային կենսակատալիզատորներ և մասնակցում կենսաէլեկտրականության առաջացմանը: Այս մանրէները հայտնի են նաև որպես պոլիհիդրոքիպականատների (կենսապլաստիկ) արտադրիչներ, ինչպես նաև դրսևորում են ծանր մետաղների նկատմամբ բարձր կայունություն: Ցույց է տրվել, որ դրանք աճում են նաև հետերոտրոֆ պայմաններում և միջավայրի որոշակի պայմաններում մակածում Հիդ-ներ: Տվյալ աշխատանքի նպատակն է ուսումնասիրել Հիդ-ների մակածման և ակտիվության դրսևորման մեխանիզմները թթվածնի սահմափակման, օսմոսային սթրեսի և մետաղների բարձր քանակի առկայության պայմաններում: Ստացված արդյունքների հիման վրա առաջարկվելու են հետերոտրոֆ պայմաններում Հիդ-ների մակածման նպաստավոր ուղիները՝ ԿՎՍ-ում դրանց օգտագործման և կենսաէլեկտրականություն

ստացման նպատակով: Հիդ-ների՝ որպես արդյունավետ կենսակատալիզատորների օգտագործումը հեռանկարային է ՀՀ-ում տվյալ ուղղության զարգացման համար:

Սուսաննա Միշայի Բաղայանի կողմից առաջարկվեց «Հայաստանում տարածված որոշ պոլիպորային դեղասնկերի /կարգ Polyporales/ ուսումնասիրումը որպես բնական հումք սնկային ծագման կենսատեխարտադրանքներ ստանալու նպատակով» թեման, Գ.00.05 «Բուսաբանություն. սնկաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ: Ս.Ս. Բաղայանը նշեց, որ ագարիկոմիցետային մակրոսկոպիկ սնկերը (դաս Agaricomycetes) հայտնի են իրենց բարձր սննդային և դեղաբանական արժեքներով: Առաջարկված թեման վերաբերվում է Հայաստանում տարածված որոշ պոլիպորային /կարգ Polyporales/ դեղասնկերի /Fomes, Trametes, Ganoderma և այլ ցեղեր/ միցելիումի՝ որպես բնական հումք կենսատեխնոլոգիական աճեցման, մորֆոէկոլոգիական, ֆիզիոլոգիական և դեղաբանական /հակաուռուցքային, հակաօքսիդանտային, հակաբորբոքային և այլն/ հատկությունների ուսումնասիրմանը սնկային ծագման դեղամիջոցների և կենսատեխարտադրանքների ստացման ու կիրառման նպատակով: Պլանավորվում է պտղամարմինների հավաք, մաքուր կուլտուրաների անջատում և հետազոտում, միցելիալ կենսազանգվածից տարբեր էքստրակտների ստացում և դեղաբանական հատկությունների ուսումնասիրում: Ս.Ս. Բաղայանի կողմից ներկայացվեցին ակնկալվող արդյունքները՝ կուլտուրաների հավաքածուների կենսաբանական, էկոլոգիական, ֆիզիոլոգիական և դեղաբանական հատկությունների տվյալների հիման վրա ակտիվ շտամերի առաջարկում, սնկային ծագման տարբեր բաղադրության ու ձևերի /հաբ, փոշի, էքստրակտ, քսուկ և այլն/ կենսատեխարտադրանքների ստացում: Թեմայի իրականացման արդյունքները կունենան հիմնարար և կիրառական նշանակություն, կնպաստեն սնկերի կենսաբանության, կենսատեխնոլոգիայի և մոլեկուլային կարգաբանության, ինչպես նաև սնկա-դեղաբանության և սնկա-կոսմետոլոգիայի հետագա զարգացմանը Հայաստանում:

Աստղիկ Սամվելի Ղազարյանի կողմից առաջարկվեց «Տոքսոպլազմոզի ուսումնասիրությունը վայրի մանր կաթնասունների օրգանիզմում» թեման, Գ.00.08 «Կենդանաբանություն. մակարուծաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ: Ա. Ղազարյանը նշեց, որ մանր կաթնասունները (կրծողներ և միջատակերներ), որոնք ունեն հսկայական հարմարվողական ներուժ և բնակվում են տարբեր կենսամիջավայրերում, ներգրավված են տարբեր սննդային շղթաներում և կարող են հեշտությամբ վարակվել տարբեր մակարույծներով, ներառյալ *Toxoplasma gondii*-ն: Այս մակարույծը հանդիսանում է աշխարհում ամենատարածվածներից մեկը և կարող է

վարակել մարդկանց: Չնայած այն հանգամանքի, որ հիվանդությունը կարող է թեթև ընթանալ՝ առանց ախտանիշների, այն կարող է ունենալ լուրջ և երբեմն մահացու հետևանքներ հատկապես կանանց մոտ՝ հղիության ընթացքում: Մանր կաթնասունների դերը *T. gondii*-ի շրջանառության մեջ և մարդու վարակման գործում աշխարհում բավականաչափ ուսումնասիրված չէ: Տվյալները ՀՀ-ի մանր կաթնասունների օրգանիզմում *T. gondii* առկայության վերաբերյալ սակավ են և կրում են տեղային բնույթ: Արդի են Հայաստանի ողջ տարածքում մանր կանթասունների սինանտրոպ և ոչ սինանտրոպ տեսակների օրգանիզմում *T. gondii* առկայության ուսումնասիրությունները, քարտեզագրումը, ինչպես նաև վարակների տարածումը կանխելու նպատակով կանխատեսումների իրականացումը:

Մարինե Սեմյոնի Առաքելյանի կողմից առաջարկվեց 2 թեմա Գ.00.08 «Կենդանաբանություն. մակարուծաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ:

Ներկայացվեց «Հայաստանի վնասատու, ինվազիվ և կենսաբանական պայքարում հեռանկարային միջատների բազմազանության և տարածվածության ուսումնասիրությունները» թեման: Մ. Առաքելյանը նշեց, որ աշխատանքի նպատակն է իրականացնել վնասատու, ինվազիվ և կենսաբանական պայքարում հեռանկարային տեսակների որակական և քանակական կազմի ուսումնասիրություններ՝ կիրառելով ինչպես ավանդական, այնպես էլ գենետիկական և բջջագենետիկական մեթոդներ: Ներկայումս ՀՀ-ում բավարար չափով չեն իրականացվել նմանատիպ ուսումնասիրություններ, որոնք ամբողջական պատկերացում կտան Հայաստանի վնասատու միջատների, դրանց դեմ պայքարող տեսակների բազմազանության և էկոլոգիայի վերաբերյալ: Հաշվի առնելով կլիմայի փոփոխությունները, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ վնասատու տեսակների տարածման վրա և նպաստել վտանգավոր ինվազիվ տեսակների ներթափանցմանն ու լայն տարածմանը Հայաստանի էկոհամակարգերում, անհրաժեշտություն է առաջանում ձեռք բերել ավելի խորքային գիտելիքներ և պատրաստ լինել հնարավոր սպառնալիքներին:

Ներկայացվեց «Կլիմայի փոփոխության ազդեցության գնահատումը Հայաստանի Հանրապետության տարածքում մոծակների միջոցով տարածվող հիվանդությունների վրա» թեման: Մ. Առաքելյանը նշեց, որ կլիմայի փոփոխությունը զգալի ազդեցություն է ունենում մոծակների միջոցով փոխանցվող հիվանդությունների տարածման և առկայության վրա՝ նոր մարտահրավերներ ստեղծելով հանրային առողջապահության համար: Սույն ուսումնասիրության նպատակն է գնահատել Հայաստանի

Հանրապետությունում կլիմայի փոփոխության ազդեցությունը մոճակների միջոցով տարածվող հիվանդությունների առաջացման և փոխանցման վրա: Ջերմաստիճանի բարձրացման, տեղումների փոփոխման օրինաչափություններով և եղանակային ցիկլերի փոփոխություններով պայմանավորված՝ ՀՀ-ի բնակլիմայական պայմաններն ավելի նպաստավոր են դառնում մոճակների բազմացման և հիվանդություններ հարուցող ցեղերի (*Aedes* և *Culex*) տարածման համար: Ուսումնասիրությունների ժամանակ կօգտագործվեն կլիմայական տվյալներ, միջատաբանական հետազոտությունների արդյունքներ և համաճարակաբանական հաշվետվություններ՝ մոդելավորելու համար, թե ինչպես են ջերմաստիճանի և խոնավության փոփոխություններն ազդում մոճակների կենսացիկլերի, վարքագծի և կենսամիջավայրի վրա: Համադրելով այս մոդելները, մենք նպատակ ունենք հայտնաբերել բարձր ռիսկի գոտիներ և այն ժամանակահատվածները, երբ փոխանցման ցուցանիշները կարող են աճել: Արդյունքները կձառայեն հանրային առողջապահության նպատակային ռազմավարությունների, վեկտորների վերահսկման միջամտությունների և նախազգուշացման համակարգերի մշակմանը՝ ՀՀ-ի կլիմայի փոփոխության պայմաններում մոճակների միջոցով փոխանցվող հիվանդությունների հնարավոր առողջապահական ազդեցությունները մեղմացնելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել վերոնշված թեմաները ըստ համապատասխան մասնագիտությունների 2025-2026 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի բուհական հայտերը ձևավորելու նպատակով ԲԿԳԿ ներկայացնելու համար:

5. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի հայցորդների և հեռակա ուսուցմամբ ասպիրանտի թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ գիտական ղեկավարներ՝ Կ.Ա. Ղազարյանը, Կ.Ա. Թոչունյանը, Ռ.Ս. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

- հաստատել էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի հայցորդ Սուսաննա Վալոդիայի Անտոնյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Նոր սերնդի բնապահպանական տեխնոլոգիաներ հողի վերականգնման և մշակաբույսերի արտադրողականության բարձրացման համար՝ ծանր

մետաղներով առաջացրած սթրեսի պայմաններում. ԿԶՆ ճանապարհային քարտեզ», Գ.00.05 «Բուսաբանություն. սնկաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ (բնագավառ՝ կենսաբանական գիտություններ), գիտական ղեկավար նշանակել կ.գ.դ., դոցենտ Կ. Ա. Ղազարյանին:

- հաստատել կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հայցորդ Լուսինե Յուրիի Մարգարյանի թեկնածուականատենախոսության թեման՝ «Հայկական միջնադարյան մատյանների բաղադրատոմսերում հիշատակված որոշ դեղաբույսերի եթերայուղերի ազդեցության կենսաքիմիական մեխանիզմները», Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ, (բնագավառ՝ կենսաբանական գիտություններ), գիտական ղեկավար նշանակել կ.գ.դ., պրոֆեսոր Կարեն Արմենի Թոշունյանին:
- հաստատել գենետիկայի և բջջաբանության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Հովհաննես Անդրանիկի Իգիթյանի թեկնածուականատենախոսության թեման՝ «Հակավիրուսային նոր միացությունների հակամուտագեն էֆեկտները մարդու և կենդանիների բջիջներում», Գ.00.15 «Գենետիկա» մասնագիտությամբ, (բնագավառ՝ կենսաբանական գիտություններ), գիտական ղեկավար նշանակել պրոֆեսոր Ռ.Ս. Հարությունյանին:

Գիտական խորհրդի նախագահ, կ.գ.դ., դոցենտ

Կ.Ա. Ղազարյան

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ

Ի.Գ. Շահազիզյան

